



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### *Ընդունվել է*

ԵՊԲՀ Գիտական խորհրդի  
27.03.2013 թվականի թիվ 8 որոշմամբ,

### *Հաստատվել է*

ԵՊԲՀ նեկտորի 11.07.2013 թվականի  
թիվ 77-Մ հրամանով  
Ռեկտոր Մ.Զ.Նաբիմանյան

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) երիտասարդ գիտնականների խորհուրդը (այսուհետ՝ ԵԳԽ) համալսարանական ինքնակարգավորվող մարմին է, որի նպատակն է աջակցել երիտասարդ գիտնականներին, ինչպես նաև նպաստել բժշկական և հարակից գիտությունների զարգացմանը:

2) Սույն կանոնակարգն ընդունվում է, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են՝ գիտական խորհրդի որոշման և հաստատվում ռեկտորի հրամանի հիման վրա:

### 2. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1) ԵԳԽ հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝  
ա) սկսնակ և երիտասարդ գիտաշխատողների, դասախոսների, հայցորդների, կլինիկական օրդինատորների և ուսանողների գիտահետազոտական

գործունեության խթանում, ուժերի համախմբում և ստեղծագործական ներուժի լիարժեք իրականացման օժանդակում,

բ) սկսնակ և երիտասարդ գիտնականների համար բարենպաստ միջավայրի ստեղծում,

գ) Համալսարանի երիտասարդների շրջանում գիտության շահավետության քարոզում,

դ) գիտահետազոտական փորձի փոխանակման խթանում,

ե) միջազգային գիտական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների հետ համագործակցություն և անդամակցություն:

### 3. Խ Ո Ր Հ Ր Դ Ի Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ե Վ

#### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ը

1) ԵԳԽ գործունեության հիմնական ուղղություններն են՝

ա) երիտասարդ գիտնականների համախմբում

բ) միջազգային և տեղական ծրագրերի մասին տեղեկատվության հավաքագրում և տարածում,

գ) ԵԳԽ ծրագրերի կատարման միջոցով Համալսարանի գիտական գործունեությանը ակտիվ մասնակցություն,

դ) համաժողովների, սեմինարների, մրցույթների և այլ միջոցառումների կազմակերպում,

ե) Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության դիմորդներին, գիտաժողովների մասնակցության հայտատուներին, գիտակրթական ծրագրերին և այլ միջոցառումներին մասնակցության համար խրախուսում և երաշխավորությունների տրամադրում:

2) ԵԳԽ աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

ա) ԵԳԽ աշխատանքային և տարեկան ծրագրերի մշակում և իրագործում,

բ) սկսնակ և երիտասարդ գիտնականների կատարած աշխատանքների լուսաբանում,

գ) գիտատեղեկատվական ցանցի ստեղծում և շահագործում,

դ) տեսական ամբիոններում կատարվող աշխատանքների արդյունքների՝ կլինիկական պրակտիկայում կիրառման քարոզում,

ե) փորձարարական և կլինիկական համատեղ հետազոտությունների իրականացման համար տարբեր ամբիոնների երիտասարդ գիտնականներից բաղկացած խմբերի ստեղծում, աշխատանքների պլանավորում և կազմակերպում,

զ) լավագույն աշխատանքների խրախուսում,

է) մրցանակների և կրթաթոշակների տրամադրման աջակցություն:

3) ԵԳԽ իրավունք ունի կազմակերպել կոնֆերանսներ, դասախոսություններ, սեմինարներ, ամառային դպրոցներ, բանավեճային ակումբներ, լավագույն կլինիկական դեպքերի քննարկումներ և այլ միջոցառումներ:

4) ԵԳԽ իր աշխատանքներում կարող է համագործակցել Համալսարանի պրոռեկտորների, ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչների և Համալսարանի այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ:

#### 4. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ

##### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) ԵԳԽ կազմված է՝

ա) նախագահից,

բ) փոխնախագահից,

գ) քարտուղարից,

դ) նախագահությունից,

ե) ընդհանուր խորհրդից:

ԵԳԽ նախագահը ընտրվում է նախագահության կազմից, փակ, գաղտնի քվեարկության միջոցով, նախագահության ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, 2 տարի ժամկետով:

ԵԳԽ փոխնախագահը և քարտուղարը առաջադրվում են նախագահի կողմից՝ նախագահության կազմից, և ընտրվում են նախագահության ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ, 2 տարի ժամկետով:

ԵԳԽ ընդհանուր խորհուրդը կազմված է անդամներից, որոնք անդամագրվում են ԵԳԽ նախագահին ուղղված դիմումով:

ԵԳԽ նախագահությունը կազմված է տասը անդամից, որոնցից վեցը առաջարկվում են ռեկտորի կողմից՝ Համալսարանի գիտակոորդինացիոն խորհրդի համապատասխանաբար վեց փորձագիտական հանձնաժողովներից, երեքը՝ ԵԳԽ

ընդհանուր խորհրդից և մեկը՝ ուսանողական խորհրդարանից: Նախագահությունը ընտրվում է 2 տարի ժամկետով: Ընտրություններ կարող են անցկացվել նախագահության անդամների կեսի ներկայության դեպքում: Նախագահության կողմից կարող են ընտրվել նաև ԵԳԽ հանձնաժողովների, հանձնախմբերի և այլ կառույցների ղեկավարներ ու անդամներ:

2) ԵԳԽ նախագահը հաշվետու է Համալսարանի ռեկտորին, ԵԳԽ ընդհանուր խորհրդին:

3) ԵԳԽ նախագահը՝

ա) ներկայացնում է տարեկան հաշվետվություն ԵԳԽ նիստի ժամանակ,

բ) նախագահության անդամների հետ մշակում է ԵԳԽ գործունեության տարեկան պլանը, ապահովում է նպատակների, խնդիրների և որոշումների իրագործումը, հետևում՝ հանձնարարությունների հստակ իրականացմանը, ներկայացնում է ԵԳԽ շահերը և պատասխանատվություն կրում աշխատանքների արդյունավետության համար,

գ) ԵԳԽ կողմից կազմակերպվող միջոցառումների անհրաժեշտությունից ելնելով, կարող է ստեղծել հատուկ հանձնախմբեր, որոնք պատասխանատու կլինեն նախատեսվող միջոցառումների կազմակերպման համար,

4) Նախագահի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Համալսարանի ռեկտորի կողմից կամ ԵԳԽ ընդհանուր խորհրդի նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նախագահը կարող է հրաժարվել զբաղեցված պաշտոնից՝ իր դիմումի համաձայն:

5) Փոխնախագահը՝

ա) ապահովում և կազմակերպում է ԵԳԽ նախագահի և նախագահության որոշումների և հանձնարարությունների կատարումը,

բ) նախագահի բացակայության դեպքում կատարում է նրա պարտականությունները:

6) Քարտուղարը՝

ա) իրականացնում է ԵԳԽ կազմակերպչական աշխատանքների կատարումը և կատարում է նախագահի հանձնարարությունները,

բ) կատարված աշխատանքի մասին հաշվետվություն է ներկայացնում նախագահին:

7) ԵԳԽ նախագահության անդամները՝

ա) ընդունում են ԵԳԽ կանոնակարգը

բ) նպաստում են ԵԳԽ նպատակների և խնդիրների իրականացմանը

գ) աջակցում և խթանում են ԵԳԽ ծրագրերի կազմման ու իրականացմանը

8) Ընդհանուր խորհրդի անդամները՝

ա) ԵԳԽ անդամ կարող են դառնալ մինչև 35 տարեկան՝ Համալսարանի այն աշխատակիցները, ուսանողները, երիտասարդ գիտնականները, ովքեր ընդունում են ԵԳԽ կանոնակարգը և նպաստում ԵԳԽ նպատակների և խնդիրների իրականացմանը,

բ) ԵԳԽ անդամը կարող է դուրս գալ սեփական դիմումի համաձայն, որի վերաբերյալ որոշում չի կայացվում:

9) ԵԳԽ անդամը իրավունք ունի՝

ա) ստանալ տեղեկատվություն ԵԳԽ գործունեության մասին,

բ) մասնակցել ԵԳԽ կազմակերպած բոլոր միջոցառումներին,

գ) արտահայտել իր տեսակետը և հանդես գալ առաջարկներով,

դ) ընտրել և ընտրվել ԵԳԽ մարմիններում:

10) ԵԳԽ անդամի պարտավոր է՝

ա) մասնակցել և օժանդակել ԵԳԽ նպատակների և խնդիրների լուծմանը,

բ) իրականացնել ԵԳԽ շրջանակներում ստանձնած պարտականությունները,

գ) ԵԳԽ շրջանակներում կատարել ԵԳԽ կանոնակարգի պահանջները:

11) ԵԳԽ ընդհանուր խորհրդի նիստերը.

ա) ԵԳԽ ընդհանուր խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Նիստի օրակարգի մասին ԵԳԽ անդամները նախապես տեղեկացվում են քարտուղարի միջոցով: Նիստերին, ըստ կարևորության, հրավիրվում են Համալսարանի ռեկտորը, գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, գիտական, ուսումնական և այլ ստորաբաժանումների ղեկավարներ ու աշխատողներ:

ԵԳԽ նիստերը իրավագոր են: Որոշումներ կարող են ընդունվել՝ անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Քննարկվող հարցերը դրվում են քվեարկության և որոշումներ են ընդունվում նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի:

Ընդունված որոշումների մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է նախագահի և քարտուղարի կողմից:

բ) ԵԳԽ նախագահության նիստը տեղի է ունենում ամսեկան առնվազն մեկ անգամ: ԵԳԽ նախագահը ներկայացնում է օրակարգը և ընթացիկ աշխատանքների մասին տեղեկատվություն: Նախագահությունը կարող է որոշումներ ընդունել անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Քննարկվող հարցերը դրվում են բաց քվեարկության և որոշումներ են ընդունվում նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի: Ընդունված որոշումների մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է նախագահի և քարտուղարի կողմից:

## 5. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1) ԵԳԽ գործունեությունը ապահովվում է Համալսարանի միջոցներով և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2) Յուրաքանչյուր միջոցառուման նախահաշիվ /հաշվետվություն/ ԵԳԽ նախագահի կողմից կազմվում և ներկայացվում է համալսարանի գիտական մաս, հաստատվում և վավերացվում սահմանված կարգով:

## 6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) ԵԳԽ ունի իր անվանմամբ և խորհրդանիշով ձևաթուղթ:

2) ԵԳԽ ունի խորհրդանիշ, հետևյալ պատկերով՝



3) ԵԳԽ ստեղծվում և լուծարվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշման և ռեկտորի հրամանի հիման վրա, գործում է Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա: